բա այլ և զաշխատողս ի վերայ սորա յիշեցէք, որ և ցանկացող եղև սբ. աւետարանիս մահտեսի Տիպրիկցի Խութլուշն և ստացաւ զսա ի հալալ վաստակոց իւրոց և արար յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողացն, Յակոբին և Խանմէլիքին և եղբօրն Գրիգորին և այլ ամ. արեան մերձաւոր ազգակցացն զսա եղեալ ի սբ. քաղաքն Երզնկ., ի դուռն Սրբոյն Յակոբայ...»։ (Խաչ. Ցուց. տետր ԺԱ, էջ 832—33)։

ԽՕՋԱՍԱՐ (ՆԱԽԱՇ).— 1707 ին կ'ընդօրինակէ Խորհրդաստեր մը (ՄՁ. Թ. 1808) Ս. Յակոբին վանքին մէջ և կը գրէ հետևեալ յիշատակարանը. «գրվեցաւ թվին ՌՃԾՁ (=1707) ձեռամբ Նախաշ խոջասարի, ով սբ. Պատարագիչ յիշեա ի սբ. զպատարագ զԿիւրեղ աստուածարան վարդապետն. որ եղ զսբ. խորհուրդս (այսպէս) յիշատակ յԵրուսաղէմ յեկեղեցին սբ. Հրեշտակապետին... Ինայ անջինջ յիշատակ Կիւրեղ վրդ.ին և ծընողացն, հօրն Յարութիւնին և մօրն Հազրվարդին և իւր կոզակցոյն Եղիսաբէթին»։ (Խաչ. Ցուց. տետր 20, էջ 2314)։